

ՆԱՍՏԱԿ ԲԱԿՈՒԻՑ

Նոյեմբերի 11-ին

Բազուի մէջ արդէն ծրագրվել է մի սրբորամա կազմելու Շոգեմուսական հայկական ընկերութիւն, անունով մի ակցիոնէրական ընկերութիւն չոգեմուսեր գործածելու կասպից ծովի վրա, որ պիտի ունենայ 80 ակցիա, իւրաքանչիւրը 1000 բուրլի: Այսօր ինչպէս մենք տեսանք ստորագրութեան թուղթը մինչև 40 բաժին ստորագրված էին և 9/25-ը ստեւած: Մեզ շատ ուրախալի է տեսնել Բազուի մէջ մի այդպիսի ընկերութիւն, որ զլիսաօրայաբա բազկացած է հայ երիտասարդ վաճառականներէրց, բայց զժրագրաբար այդ 40 անձինքներէ մէջ մի երկուսը հազիւ թէ կան որ ծանօթ լինէին չոգեմուսական գործին, մնացածները մանրփակութեամբ վաճառականներ են, գործակատարներ և այլն: Ինչո՞րք այժմ նրանումն է թէ այդ 80 բաժին ունեցողներն հետ կարելի է մի հաստատ գործ սկսել, որ իր սկսած օգուտը բերէ: մեզ պատահել է տեսնել մի քանի այդպիսի ընկերութիւններ, որ շատ կարճ ժամանակամիջոցում քանդվել են, որովհետև ամեն մի գործին անտեղեակ մարդ մի քանի այդ ընկերութեան մէջ և սկսելով զատ զատ դատողութիւններ տալ, գործի խանգարման պատճառ են զանուում: Երանի թէ մենք սխալված լինէինք: միայն մենք թոյլ ենք տալիս մեզ նկատել, որ այդպիսի մի ընկերութիւն աւելի օգտաւէտ կը լինի այն ժամանակ, երբ կը միանան մի հինգ տասը մեծ հայ գործարանատէրեր փոխանակ հազարի, հինգ կամ տասը հազար տալով, իսկ պակաս գումարներին համար ակցիա դուրս տալով այդպիսով կարելի է սպասել հետեւեալ օգուտներին: առաջին, որ իրանք գործարանատէրերը լինելով այդ ընկերութեան հիմնադիրները, կարող կը լինեն իրանց նախկին փոխադրել սեփական շահախնայ չոգեմուսներով, ի հարկէ նշանակված մի տակաւայով երկրորդ՝ ստացված օգուտներին նշանակված մասը դուրս տուած ակցիան կը ստանայ: բայց այդ չը լինելով ձայներին մեծամասնութիւն գործին անտեղեակ մարդիկներէրց, գործը մարտը և խոհեմութեամբ կը կատարվի:

«Մշակի» առաջարկութիւնը կազմելու Բազուի մէջ հայ գործարանատէրերից մի ուժեղ ընկերութիւն մըցելու: Նօրէյի հետ, բաւական ազդեցութիւն ունեցաւ և համակրութեամբ ընդունվեցաւ այստեղի գործարանատէրերից, բայց կարելի է արդեօք համաձայնութիւն, կայացնել մի կրտսերիկեանի, մի Միրզայանի, մի ձեզնաւորեանի կամ որ և իցէ մէկի հետ, զժուար խնդիր է լուծելու: հայ վաճառականը թէ և միլիոնատէր գարձեալ ըստ չի սկսել մի ուրիշ հայի հետ մի ընդհանուր գործ սկսելու և շարունակելու: բայց եւրօպայիս անում է այդ: նա չէ վիստոված եթէ առաջին արդիւնների է հանդիպում և վնասներ է պատահում: նա տանում է տոկոսութեամբ իր սկսած գործը և ստանում է իր սպասած օգուտները: բայց հայը մի գործի մէջ այդ համերկութիւնը չունի: վնաս արեց թէ չէ, նա կը թողնի այդ գործը:

Օրինակ մէկը նորակազմ «Հայկական չոգեմուսական ընկերութեան» 80 ակցիոնէրներէ մէկն է: Տէնց տեսաւ մի փոքր անաջողութեան նշան, նա իր ակցիան անմիջապէս մեծ զիջումով ծախելու է և յետ քաշվելու:

Յոյս ունենք որ այդ բոլորը նորակազմ ընկերութիւնը իր նիւտերում աչքի առաջ կուենանայ:

Արէ Ապրեսեանց

ՆԱՍՏԱԿ ՍՂՆԱԹԻՑ

Նոյեմբերի 12-ին

Տեղիս հայոց երկուսու ուսումնարանների նոր հոգաբարձուների ընտրութիւնը կայացաւ անկիս 8-ին:

Հասարակութիւնը ժողովված էր օրիորդաց ուսումնարանի զանգում, որտեղ ընտրութիւնից առաջ հոգաբարձութեան նախագահ Ստեփաննոս ա. քան. Տէր-Ստեփաննոսեանցը հասարակութեանը հասկացրեց ուսման նշանակութիւնը, մայրների լեզուի սովորելու անհրաժեշտութիւնը և ուսուցիչների ու հոգաբարձուների պարտականութիւնը:

Բարեկրօն նախագահը քաջ գիտեանալով, որ

ուսումնարանի բարեկարգութիւնը կախված է լաւ հոգաբարձուներից՝ առաջարկեց հինգ ուսուցիչ մարդիկ, որոնք են պ. պ. Յ. Գօզալեանց, Ա. Տէր-Մատթէոսեանց, Կ. Տէր-Մատթէոսեանց, Մ. Լիանոզեանց և Ա. Սարգսեանց և խնդրեց այս հինգ անձերից ընտրել երեքը իբրև հոգաբարձու: Բոլոր ժողովուրդը միաբերան ընդունեց նախագահի առաջարկութիւնը: Նախագահը վերջացրեց իր խօսքը ասելով թէ՛ երբ նոր հոգաբարձուները կընտրվեն և կը հաստատվեն իրանց պաշտօնի մէջ, այն ժամանակ նրանք կարող են բոլոր հայիները ինձանից ստանալ:

Այդ միջոցին Եղիշէ քան. Տէր-Աստուածատրեանցը մէջ ընկաւ և սկսեց մի քանի անկազ և անհիմն խօսքերով վրդովեցնել հասարակութեանը՝ յարձակվելով նախագահի և ուսուցիչների վրա: Սա նախագահի վերաբերութեամբ ասեց, որ մինչև այժմայ յայտնի չէ թէ մոտավաճառութեան արդիւնքն և ուսումնարանի նախընտրելի ձևն ո՞րն է, պէտք է նախ և առաջ հաշիւ պահանջել: Այդ ինչո՞ցն է, որ տէր Եղիշէն մինչև այժմայ չը զիտէ թէ ուսումնարանի հայիները և մոտավաճառութեան արդիւնքը ու՞մ ձեռքն է, քանի որ ամենքին լաւ յայտնի է, որ թէ մոտավաճառութեան արդիւնքը և թէ ուսումնարանի անտեսական մասը յանձնված է Ստեփաննոս ա. քանանային, որը ամենայն ջանք գործ է դնում ուսումնարանիս բարեկարգութեան համար, բայց շատ ենք ցուում, որ սրան ոչ ոք օգնող չը կայ: Մինչև այժմ մեր ուսումնարանի համար հրաւիրվում էր միայն հայոց լեզուի ուսուցիչ, իսկ ուսուցիչ լեզուի ուսուցիչը հրաւիրվում էր անգլիս քաղաքային ուսումնարանից, բայց քաղաքային ուսումնարանից հրաւիրված ուսուցիչները չիմանալով հայոց լեզուն՝ անյարժար էին մեր ուսումնարանի համար, այս պատճառաւ տէր-Ստեփանը հայ ուսուցիչը հրաւիրեց ուսուցիչ լեզուի համար:

Տէր-Եղիշէն ուղեւորով ուսումնարանի պատիւր վայր ձգել հասարակութեան առաջ սկսեց անխնայ յարձակվել ուսումնարանի և ուսուցիչների վրա ասելով, թէ թէլուսի ուսումնարանը և ուսուցիչները լաւ են մերից: Բացառութիւն ենք պահանջում տէր-Եղիշէից, թէ ինչ հիման վրա է վաճարանում մեր ուսուցիչներին, քանի որ տեղացիները չնորձակաւ են ուսուցիչներին և քանի որ ինքը տէր-Եղիշէն ուսուցիչների գործունէութիւնից ոչինչ անգնելութիւն չունի: Այստեղից երևում է որ տէր-Եղիշէն պէտք է անձնական թշնամութիւն ունենայ նախագահի և ուսուցիչների հետ:

Տէր-Եղիշէն միշտ թշնամութիւն է ցոյց տուել զէպի ուսուցիչները (որովհետև ցանկութիւն ունի ուսուցիչութեան, բայց չեն ընդունում): Այստեղից դիտեցած բոլոր ուսուցիչները անգոն են գնացել սրանից, զանդատվել են և պատժել են ստուել, ինչպէս առաջ պ. Կ. Դաւթեանցը պատժել տուեց օրան մի քանի ամիս:

Մինչև անգամ Տէր-Եղիշէն այնպիսի միտք յայտնեց, որը ոչինչ կապ չունէր մեր ուսումնարանի հետ: այս միտքը ոչ թէ իր ընտանական դատողութեամբ էր, այլ լրագիրներից էր: «Մշակ»-ը խօսելով ֆիլիսոփայի համալսարանի վրա, ասում էր թէ պէտք է ֆիլիսոփային հիմնել վերջապէս մի համալսարան, որովհետև մեր օրդիքը իրանց ուսման ծարուր յարկեցնելու համար գնալով հիւսիսային երկիրներ, բոլորովին անսովոր կլիմայում—չեն դիմանում և մեռնում են ցրտից և չքաւորութիւնից: Տէր-Եղիշէն մի և նոյն խօսքերը կրկնեց և այստեղ, նրա կարծիքով մեր ձխական ուսումնարանը կարելի է գործնել համալսարան:

Հասարակութիւնը ոչինչ չը հասկանալով տէր-Եղիշէի խօսքերից և կարծելով թէ լաւ բան է ասում, ամենքն էլ կուրօքն ընտրեցին նրան հոգաբարձու, սրա հետ ընտրվեցան և տէր-Ստեփանի առաջարկած մարդկանցից երկուսը—պ. պ. Յ. Գօզալեանց և Կ. Տէր-Մատթէոսեանց: Չարձանալի բան է թէ ինչ հարկաւորութիւն կար տէր Եղիշէին հոգաբարձու ընտրելու, քանի որ ունենք զարգացած և ուսեալ մարդիկ, որոնք են նախագահի առաջարկածները: Հասարակութեան այն մասը, (ընտրութեան ժամանակ ներկայ էին միայն 48 մարդ) որը ներկայ չէր ընտրութեան ժամանակ, իմանալով տէր Եղիշէի հոգաբարձու ընտրվելը—անվաւեր է համարում այդ ընտրութիւնը և պահանջում է երկրորդ օրինաւոր ընտրութիւն և ուղում է, որ տէր Եղիշէի

փոխանակ ուրիշին ընտրեն, որովհետև սա անյարժար է հոգաբարձութեան համար:

Կատարեալ յաջողութիւն ենք ցանկանում հասարակութեանը, որպէս զի անեն երկրորդ օրինաւոր ընտրութիւն: Ուստի խնդրում ենք թեմական վերատեսչին, որ ինքը զայ և անձամբ օրինաւոր ընտրութիւն անի հոգաբարձուների:

Մ.

ՆԱՍՏԱԿ ԱՌԱՅԻՒԱԹԻՑ

Նոյեմբերի 9-ին

Քաղաքի կենտրոնում Մարտաշայշաւում ձորակի մէջ տարիներով հոտում է աղբը: այդ ձորակի վրա շինած են զազանի տպանդանոցներ և արտաբնոցների խողովակներ, պոլիցիան և քաղաքային վարչութիւնը միշտ կոչը և համը են ձեռնում Ալեքսանդրեան և Լաչիսեան փողոցով անցկենալիս և եթէ մէկը անկարելի լինի նրանց այդ զազարի աղբանոցի վրա, զուցէ ծաղրելու էին ասելով՝ զոս օգտակար է առողջութեան, որովհետև բուժում է բարակացաւը, բայց իսկապէս ասում են քաղաքը միջոց չունի մաքրել աւալու, կաստայում փող չը կայ և զատարկ հողեր էլ չը մնացին ծախելու:

Քաղաքիս մի քանի ընդարձակ փողոցները սաւած են, միւսները ցեխերի որոգայթ են, զժրագրաբար եթէ անցորդը գիշերով լապտեր չունենայ ձեռին՝ (քաղաքի լապտերները միմիայն իրանց չըջանակին են լոյս տալիս) անպատճառ առանց կրկնակոչիկի է տուն հասնում, մինը զուցէ երկուսն էլ ցեխի մէջ պահաւորվում:

Քաղաքային վարչութիւնից ընտրված կայքադարի վերակացու չը գիտեմ զրա պարտականութիւնները, բայց մտազորն իր ընտրած կտորը, կամ ցանկացած զնովն է վաճառում միտք, սրիկաներին և բախկաններին արգելող չը կայ որ քաղաքից դուրս գրուցուտ բերած միջոցը ձեռքից չը խլեն ճանապարհին և գինը թանկացնելից զար, սկանդալներ չը հանեն խեղճ գրուցուտ գլխին:

Ալեքսանդրի թիւր բազմանում է զաղթականներով: վերջինները ապրուստ և պատուարան չունենալով, գիշեր, ցերեկ մերկ և բորիկ ման են զալիս փողոցներում և մուրալով պարտաւորում Ալեքսանդր հոգաբարձութիւնը կարեց իր գործունէութիւնը, հրապարակական յօգուտապատասխանութիւն անելը արգելվեցաւ մարմնաւոր իշխանութեան հրամանով, մտածող էլ չը կայ փոքրիկ բարեգործական ընկերութիւն մը կազմելու այդ խեղճերին կարեկից լինելու համար, եկեղեցին կարող է սալ ընդարձակ պատասպարաններ, իսկ քաղաքացին օգնել նիւթապալս: Աղբերում եմ զգայուն և մարդասէր օրտերին աջակցել այդպիսի ընկերութիւն մը կազմելու:

ՆԵՒՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

ԲԱԿՈՒԻՑ մեզ գրում են որ այս օրերս հասել է այդ քաղաքը կրուսաւալի հայոց վանքի մի վարդապետ, Մամբրէ անունով, միշտ վանքի անունով փողեր ժողովելու համար:

Նոյեմբերի 20-ին լինելու է կենդանիների հովանաւորութեան ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան ընդհանուր ժողովը:

Նոյեմբերի 15-ին, կիրակի օր, կայացաւ բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը Արթուրում: Թատրոնում Ընթերցողը կը գտնի այդ ժողովի մասին կարճատեղ տեղեկութիւններ և եղած ընտրութիւնների մասին մեր կարծիքը «Մշակի» այսօրվայ առաջնորդող յօդուածում:

Մեզ գրում են ՆՈՒԻՍԻՑ, (թուրքմանակ, ուստիսոս և բազմանայ Նուխու ամբողջ վիճակի միակ հոգեւոր ուսումնարանը այս տարի շատ ահաջող ուսուցչական խումբ ունի կազմած: Ուսուցիչներից ոչ մինը իր ծանր պաշտօնին յարմար չէ, ոչ մէկը նրանցից ոչ մի բարեկարգ զուրթի երեսը տեսած չէ: Գորա պատճառը հոգաբարձուներն են, որոնք հասարակաց շահ և օգուտը թողած, իրանց անձնական օգտին են կանխում ծառայեցնել ուսումնարանը:)

ՂԱՐՍԻՑ մեզ գրում են: «Այս տարի տեղիս հայոց հոգեւոր զարդաներում հրաւիրվեցան որպէս ուսուցիչ և վարժուհի պարոն և տիկին Ամատուհի, նրանց մասին մի քանի շարամիտ մարդկանց ձեռքով տարածված լուրերը կատարելապէս սուտ են: Ամատուհիները շատ լաւ են վարվում աշակերտների հետ և աշակերտներին նրանց սուած ամենախիստ պատիժը եղել է շարութիւն անողներին երբեմն անձալ թողնելը միմիայն, Ուսումնարանի տեսուչ պ. Ղազարեանն է: Ղարսեցիները շատ գոն են պարունի ցոյց տուած եւականից: Կատարեալ զրպարտութիւն է որ իբր թէ Ամատուհիք ձեռնում են աշակերտներին: Եթէ վերջապէս այդ զիտաւորութիւնն էլ ունենային, ոչ տեսուչը, ոչ էլ թեմական առաջնորդը երբէք չէին թոյլ տայ նրանց վարվել այդ ձևով անուկների հետ:»

Լուսւմ ենք որ այն օրից, երբ ԱՐՏՈՒՆԻ հայկաթօլիկները եպիսկոպոսը ճանաչվել է կառավարութեանց որպէս օրինական առաջնորդ Անցրիկիկանեան և կովկասեան հայկաթօլիկների, այն օրից մեր հայկաթօլիկները այլ եւ կախում չունեն Սարատովի կաթօլիկ լատին եպիսկոպոսից, այլ կախված են միմիայն Արտուհի հայկաթօլիկ առաջնորդից: Դա շատ ուրախալ է և այսուհետև մեր կաթօլիկ եղբայրները կարող են զարգանալ որպէս կաթօլիկ հայեր, առանց կորցնելու իրանց սոցիալութիւնը, իրանց մայրների լեզուն իրանց եկեղեցական արարողութիւնների մէջ և իրանց զարդաներում:

Ս. ՊԵՏԵՐՐՈՒԹԻՑ մեզ հաղորդում են որ զիճտերիս ցաւը, որ խոր արժանաներ էր զցել Ս. Պետրբուրգի նահանգի մի քանի գաւառներում, այժմ, չնորով բժշկական եւանդոտ օգնութեան, կատարելապէս ոչնչացրած է:

Ընթերցողները կարդալով երէկվայ հեռագիրը թէ մի մարդ բեւօլվեր էր արձակել զհնարալ Չերէյին: վրա, զուցէ չը գիտեն թէ ինչ պատճառ է վարում զհնարալ Չերէյին, նա ներքին գործերի մինիստրի, կոմս Եղնաթիմի օգնական է և մի և նոյն ժամանակ քաղաքական յանցաւորների գործերը քննող մասնաւորագործի նախագահ է: նա նոր էր նշանակվել այդ պաշտօնի վրա և կարճ ժամանակում քննել և վճառել էր մօտ 300 քաղաքական յանցաւորների հին գործերից, այսինքն այդ գործերի ընդհանուր թիւ մի չորրորդական մասը: Ուրեմն նրա քննութեանը յանձնված քաղաքական յանցանքների գործերի ընդհանուր թիւը մօտ 1200 է:

Լուր կայ որ չուսով հիմնեցու է Ս. ՊԵՏԵՐՐՈՒԹԻՑ մի նոր իգական արուեստագործական դպրոց, որի սրբօրումը իգա բազաբի զԵՂՐՈՅԻ պրօքորամին համեմատ կը լինի:

Խոնարհաբար խնդրում ենք մեր հայ ուսանողներին, որոնք ուսանում են Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի կամ Աւստրիայի համալսարաններում, թարգմանել առուսաց և այլ եւրօպական լեզուներով մեր լրագրի երէկվայ 116 համարում տպված «Երարձեալ մի սպաքոյց» վերջնագրով յօդուածը և աշխատել տպագրել սալ այդ յօդուածը կամ ամբողջութեամբ, կամ գոն նրանից արած քաղաւածները, եւրօպական այլ և այլ լրագիրներում:

ԱՐՏԱԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

«ПОРЯДОКЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԳՈՒԹԻՆԸ

Բերլինից «ПОРЯДОКЪ» լրագրին հաղորդում են հետեւեալը: Նոյեմբերի 12-ին իշխան Բիսմարկի հաստա Բերլին, որ նրան շատ զուրկական ընդունելութիւն չը պատրաստեց: Այդ օրը Բերլինի 4-դ և 6-դ ընտրողական շրջանների մէջ կրկնաբարեկարգութիւններ կային, որոնց ժամանակ առաջագէտները կարծեալ յաղթող հանդիսացան: Բերլին և զարձեալ յաղթող հանդիսացան: Բերլին և զարձեալ յաղթող սօցիալ-դեմոկրատները յաղթեցան, չը նայելով, որ պահպանողականները մասամբ նրանց պաշտպանեցին: Իրանց կուսակցութեան շահին տեսակէտից